գոց՝ Յովբի և Եզեկիէլի), որոնց բնագիրները մինչև այժմ անյայտ էին և ոչ մի թարգմանութեամբ երևան չեն հանուած։

Այս և ուրիշ Որիգինեան աշխատութիւններից Հ. Դաբեգինը կազմել է մի առանձին հատորիկ «Մնացորդք բանից Որիգինեայ», վերնագրով՝ որ շուտով մամուլի կյանձնուի։

* *
*

Փետր. 20-ին Ն. Սրբութեան ներկայանալու արժանացաւ Դումայի նախկին-անդամ և՝ այժմ Աշտարակի շրջանի հաշտարար դատաւոր պ. Յովհ. Սաղաթելեան։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Սինոդը ընդառաջ գնալով ժամանակակից պահանջներին՝ որոշեց մի քանի շատ կարևոր նախագծեր իրականացնել առանց սպասելու եկեղեցական ժողովի։ Առաջին հերթին դրուած են եկեղեցական դատաստանի և ապա ամուսնալուծութեան հարցերը։ Վերջինիս իրականացման համար գումարած է եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքը անող յանձնաժողովի նախագահ Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Սերգիի ղեկավարութեամբ մի միջվարչական խորհրդակցութիւն, ուր կան ներկայացուցիչներ՝ հոգևոր իշխանութիւնից, պետական կոնտրոլից, պետական դիւանատնից և արդարադատութեան, ներքին գործոց ու ֆինանսների նախարարութիւնից։ Խորհրդակցութեան մէջ Սինոդի ներկայացուցիչն է Սինոդի անդամ Իոակիմ արքեպիսկոպոսը։

Թեմերից մէկում կասկած էր ծագել, թէ կարելի է հոգեհանգիստ կատարել այն ոճրագործների համար, որոնք բանտում պատժի են ենթարկուել։ Սինոդը բացատրել է, թէ այն ոճրագոր-

ծը, որը քրէական օրէնքներով նոյն իսկ մահուան պատժի է ենթարկուել, չի զրկւում պատարագի արժանանալուց, եթէ եկեղեցական իշխանութիւնը նրան եկեղեցուց չի վտարել։

Մինսդը լիազօրել է աւագ դատախազ Թայլին Պետական Դումա մտցնելու հոգևորականների քաղաքային ընտրութիւններին մասնակցելու նախագիծը։

Ինչպէս տեղեկացնում են Մինսդի աւագ դատախազ Թանը Ցարսկոյէ Սէլօյում սովորական զեկուցումն անելուց յետոյ արժանացել է մասնաւոր իօսակցութեան եկեղեցական հարցերի վերաբերմամբ։

Մերգի արքեպիսկոպոսի նախագահութեամբ տեղի է ունեցել միջվարչական յանձնաժողովի խորհրդակցութիւն ամուսնալուծական խնդրի վերաբերմամբ։ Ամուսնալուծութեան մի պատճառ էլ համարուելու է և այն դէպքը, երբ ամուսիններից մէկը գիտամամբ հեռանայ միւսից, 5 տարի ժամանակով։ Մինչև այժմ 5 տարի բացակայութեան հետ անհրաժեշտ էր նորա «անյետ» բացակայելը։ այժմ այդ անյետ պայմանը կարելոր են համարում հանել միջից, ի նկատի ունենալով, որ հէնց գիտամամբ հեռանալը ամուսնութեան արբատան խորհրդի դէմ է։

Նախարարների խորհուրդը քննել և հաւանութիւն է տուել ուղղափառ եկեղեցու պաշտօնեաներին 35 տարի ծառայելուց յետոյ նշանակել կենսաթոշակ ըստ այսմ. մայր եկեղեցիների աւագ քահանաներին և թեմական քարոզիչներին—1200 ռ. տարեկան. շտատի մէջ եղող աւագ քահանաներին—1050, ոչ շտատնի աւագ քահանաներին, քահանաներին և աւագ տարկաւագներին—900 ռ. տարկաւագներին—600 ռ. դպիրներին—300 ռ.։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հռոմից հեռագրով ժխտում են ֆրանսիական լրագրերի այն տեղեկութիւնը, իբր թէ Վատիկանը ցանկանում է խաղաղութեան համար միջնորդել։ Պապը վարւում է չէզոք անձնաւորութեան վայել ձեւով և չի ուզում խառնուել գործին, որովհետև գերմանական յայտագրում իրական խաղաղութեան առեւայներ չի գտնում։

Աւստրիայի նոր կայսր Կարլոսը գահ բարձրանալուց յետոյ ինքնաձեռագիր մի գրութիւն է ուղղել պապին և օրհնութիւնն է խնդրել։ Պապը իր պատասխանում Կարլոսի թագաւորութեան ամենալաւ գործը խաղաղութիւնը վերականգնելն է համարել։ Եթէ թագաւորը կարողանայ ազդել իր դաշնակիցների վրայ խաղաղութիւն կնքելու գործում այդպիսով մեծ ծառայութիւն մատուցած կլինի ոչ միայն ամբողջ կաթոլիկ աշխարհին, այլ և ողջ մարդկութեանը։

Պապի գրութիւնը մեծ տպաւորութիւն է արել թագաւորի, ինչպէս և թագուհու վրայ, որը մոլեռանդ կաթոլիկ է։

Գերմանիայի և Ամերիկայի յարաբերութիւնների խզումը մեծ տպաւորութիւն է թողել պապի վրայ։ Նա սպասում է Իսպանիայի վճռին, որովհետև իր անելիքը համաձայնեցնելու է Իսպանիայի ձեռք առած միջոցների հետ։